


ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՖՐԱՆՍԻԱ



IOM • OIM

IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՖՐԱՆՍԻԱ



IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն



Սույն ուղեցույցը հրատարակվել է Իտալիայի Կառավարության ֆինանսավորմամբ:

© **Հեղինակային իրավունքը պաշտպանված է:** Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հրատարակչի նախնական գրավոր թույլատվության:

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ՄՄԿ-ի կամ նրա անդամ-պետությունների պաշտոնական տեսակետների հետ:

Հրատարակիչ՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն



**Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն**

Հայաստան • Երևան 0010 • ՄԱԿ-ի գրասենյակ

• Պետրոս Ադամյան փողոց 14, 1-ին հարկ

Հեռ.՝ (+374 10) 58 56 92 • 58 37 86 • Հեռապատճեն՝ (+374 10) 54 33 65

• Էլ.փոստ՝ iom@arminco.com • <http://www.iom.int/armenia>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Վիզա՝ ընդհանուր տեղեկություն.....	5
2. Ներգաղթն աշխատանքային նպատակով	7
3. Ներգաղթն ուսման նպատակով	9
4. Բնակության թույլտվություն.....	11
5. Ապաստան տրամադրելու գործընթացը	14
6. Ընտանիքի վերամիավորում	15
7. Առողջապահության համակարգը.....	16
8. Սոցիալական ապահովության համակարգը.....	17
9. Բնակարանային պայմանները	18
10. Դիպլոմների ճանաչումը	19
11. Աջակցման ծառայություններ	20
12. Քաղաքացիություն/հպատակություն	21
13. Այլ կարևոր տեղեկություններ.....	22

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՖՐԱՆՍԻԱ

1. Վիզա՝ ընդհանուր տեղեկություն

Ֆրանսիա մուտք գործող օտարերկրացին պետք է ունենա ճանփորդական վավեր փաստաթուղթ, ինչպես նաև վիզա կամ բնակության թույլտվություն:

Վիզայի տեսակները

Ֆրանսիայի իշխանությունների կողմից տրվող վիզաները կարող են լինել չորս տեսակի: Վիզայի տեսակը նշվում է վիզայի դրոշմի վրա, հատուկ հատվածում և տարբերակվում է լատինական A, B, C կամ D տառերով:

Օդանավակայանի տարանցիկ վիզա՝ A

Վիզայի այս տեսակը թույլ է տալիս, որ ուղևորները մուտք գործեն օդանավակայանի միջազգային տարանցիկ տարածք՝ տարանցիկ չվերթի սպասելու համար, սակայն երկիր մուտք գործել չի թույլատրում:

Տարանցիկ վիզա՝ B

Վիզայի այս տեսակը երկրից երկիր ճանփորդող օտարերկրացուն թույլ է տալիս անցնել Շենգենի տարածքով: Տարանցիկ վիզան կարող է տրվել միայն այն դեպքում, երբ օտարերկրացին ներկայացնում է Շենգենի տարածքում գտնվելուց հետո ժամանման երկիր մուտք գործելու թույլտվությունը: Տարանցիկ վիզան կարող է տրվել մեկանգամյա կամ կրկնակի, բացառիկ դեպքերում՝ բազմակի տարանցման համար, պայմանով, որ սլյալ երկրով տարանցման ժամկետը չի գերազանցի վիզայի դրոշմի համապատասխան հատվածում նշված օրերի քանակը: Տարանցիկ վիզան ըստ օրենքի չի կարող գերազանցել հնգօրյա ժամկետը:

Կարճաժամկետ վիզա՝ C

Վիզայի այս տեսակն օտարերկրացուն թույլ է տալիս մուտք գործել և մնալ Շենգենի տարածքում զբոսաշրջության, գործնական, անձնական կամ այլ այցելությունների կամ նմանօրինակ նպատակներով երկիր

ժամանելու համար: Կարճաժամկետ վիզան կարող է տրվել տվյալ երկիր մեկանգամյա, կրկնակի կամ բազմակի մուտքի համար, սակայն ո՛չ մեկանգամյա տևական հյուրընկալությունը, ո՛չ մի քանի հաջորդական հյուրընկալությունները չպիտի գերազանցեն 90-օրյա ժամկետը՝ մուտքի թույլտվության օրվանից սկսած վեցամսյա ժամանակահատվածում: Որոշակի կարգի անձանց, օրինակ՝ գործարարների, ուսանողների կամ լրագրողների համար փաստաթղթային պահանջները կարող են պարզեցվել: Որոշակի կարգի հաճախ ճամփորդող անձանց (ներառյալ գործարարները, ուսանողները, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները) կարող են շնորհվել բազմակի մուտքի երկարաժամկետ վիզաներ, իսկ դիվանագիտական անձնագիր ունեցողները կազատվեն վիզայի պարտավորություններից:

Երկարաժամկետ վիզա՝ D

Վիզայի այս տեսակը թույլ է տալիս Ֆրանսիայի տարածքում գտնվել երեք ամսից ավելի երկար տևողությամբ: Երկարաժամկետ վիզա կարելի է ստանալ հետևյալ պայմանների առկայության դեպքում (յուրաքանչյուրը պահանջում է առանձին գործընթաց և համապատասխան փաստաթղթեր).

- Ֆրանսիայում ուսանելու նպատակով
- Եթե անչափահասն այնտեղ ուսում/կրթություն է ստանում
- Եթե օտարերկրացին Ֆրանսիայի քաղաքացու ծնող է կամ տատիկ/պապիկ (կամ ամուսնացած է Ֆրանսիայի քաղաքացու հետ) և գտնվում է նրա խնամակալության տակ
- Եթե օտարերկրացին Ֆրանսիայի քաղաքացու (կամ Ֆրանսիայի քաղաքացու հետ ամուսնացածի) ծնող է կամ տատիկ/պապիկ, թեև չի գտնվում նրա խնամակալության տակ (պետք է ապացուցի, որ ունի բնակարանային պայմաններ և բավարար ֆինանսական միջոցներ՝ իր ապրուստն ապահովելու համար)
- Եթե օտարերկրացին Ֆրանսիայի քաղաքացու (կամ Ֆրանսիայի քաղաքացու հետ ամուսնացածի) ծնող կամ տատիկ/պապիկ է և ցանկանում է այցելել նրան, պայմանով, որ Ֆրանսիայում մասնագիտական գործունեությամբ չի զբաղվելու
- Ֆրանսիայի քաղաքացի զուգընկերոջ հետ վերամիավորվելու նպատակով

- Ֆրանսիայի քաղաքացու հետ ամուսնանալու նպատակով
- Եթե աշխատում է Ֆրանսիայում

2. Ներգաղթն աշխատանքային նպատակով

Ֆրանսիայի 2006թ. միգրացիայի և ինտեգրման մասին օրենքը նպատակ ունի բարելավելու ներգաղթի համակարգը, կառավարությանը հավելյալ լիազորություններ ընձեռելով՝ որակյալ մասնագետների հոսքը Ֆրանսիայի աշխարհագրական տարածքներ (ուր որ դրա կարիքը զգացվում է) խթանելու համար: Ֆրանսիայի որոշակի տարածքներում գործատուների կողմից պահանջարկ ունեցող մասնագիտական հմտություններով օտարերկրացիները կարող են ստանալ **«հմտությունների և տաղանդների» վիզա**՝ երեք տարվա ժամկետով: Կառավարությունը վիզայի այս տեսակը կարող է տալ զարգացող երկրներից ներգաղթող որակյալ մասնագետներին միայն այն դեպքում, եթե առաքող երկիրը Ֆրանսիայի հետ ունի «համազարգացման» համաձայնագիր, կամ եթե տվյալ ներգաղթողը պարտավորվում է հայրենիք վերադառնալ վեց տարվա ընթացքում: Բացի այդ, Ֆրանսիան խթանում է **կառավարման վերին օղակի անձնակազմի** և նրանց ընտանիքների մուտքը երկիր՝ որպես մշտական աշխատողներ: Այս խմբի համար պարզեցվում է վարչական գործընթացը՝ արագացնելով նրանց կացության փաստաթղթերի և աշխատանքի թույլտվության տրամադրումը և նրանց ամուսինների համար դյուրացնելով աշխատանքի տեղավորումը:

Օտարերկրացիներին, որոնք աշխատանքի հրավեր են ստացել, կարող է տրվել **ժամանակավոր աշխատանքի թույլտվություն (A.P.T.)** ի սկզբանե ոչ ավելի, քան մեկամյա տևողությամբ, բնույթով կամ ըստ հանգամանքի ժամանակավոր աշխատանք կատարելու համար: Պայմանով, որ տվյալ աշխարհագրական տարածքում աշխատանքային իրավիճակն առարկության տեղիք չի տալիս, այս գործընթացն օտարերկրացիներին (փորձնակներ, հետազոտողներ, գիտնականներ, կատարողներ, օտարերկրյա ընկերության կողմից ֆրանսիական մասնաճյուղում աշխատանքի գործուղված

մասնագետներ և այլն), ովքեր մշտական աշխատանքի դիմելու կարգավիճակ չունեն, հնարավորություն է ընձեռում Ֆրանսիայի տարածքում ժամանակավորապես վճարովի աշխատանք կատարել:

Մշտական աշխատողները հավաքագրվում են Ֆրանսիայի գործատուների նախաձեռնությամբ, ովքեր իրենք են դիմում օտարերկրյա թեկնածուներին: Այնուհանդերձ, օտարերկրացիներին աշխատանքի վարձել կարելի է միայն այն դեպքում, եթե Ֆրանսիայում հնարավոր չէ գտնել համապատասխան որակյալ մասնագետներ: «La Direction Départementale du travail, de l’emploi et de la formation professionnelle»-ը (D.D.T.E.F.P. – տեղական Աշխատանքի վարչությունը) այնուհետև քննության է առնում գործատուների ներկայացրած օտարերկրյա աշխատող հրավիրելու դիմումները, մեկ առ մեկ սկզբունքով: Այն երկրներում, ուր Օտարերկրացիների ընդունման և միգրացիայի ազգային գործակալությունը (ANAEM) չունի ներկայացուցչություն, աշխատողներն իրենց վիզան և ստորագրված պայմանագիրն ստանում են տեղի Ֆրանսիայի հյուպատոսարանից: Ֆրանսիա ժամանելուն պես նրանք պետք է անցնեն պարտադիր **բժշկական քննություն**, որն իրականացնում է ANAEM-ի տարածքային պատվիրակությունը: Ֆրանսիա ժամանած մշտական աշխատողները պետք է պետության հետ ստորագրեն պայմանագիր` Contrat d’accueil et d’intégration (CAI), որի նպատակն է Ֆրանսիայում իրենց մշակութային և լեզվական մերձեցման դյուրացումը: Աշխատանքային վիզաների համար պահանջվող փաստաթղթերի վերաբերյալ հավելյալ տեղեկություններ կարող եք գտնել <http://www.ambafrance-srb.org/spip.php?article1190> կայքում:

Աշխատանքային շուկայի պահանջարկը հիմնականում առկա է հետևյալ ոլորտներում. իրավաբանական խորհրդատվություն, աուդիտներ, մարդկային ռեսուրսների գործակալներ, ՏՏ մասնագետներ, առևտրի բոլոր սեկտորների մասնագետներ, երեխաների խնամքով զբաղվողներ, տնային ծառայողներ, տնային և գրասենյակային սպասարկող-հավաքարարներ՝ ինչպես պետական, այնպես և մասնավոր ոլորտում:

Ֆրանսիայում աշխատանքի առաջարկների էլեկտրոնային կայքեր.

http://europa.eu/youth/working/finding_a_job/index_fr_en.html

Ֆրանսիայի ազգային աշխատանքային ծառայություն. <http://www.anpe.fr/>

<http://www.emploi.org/>

[http://www.apecita.com/.](http://www.apecita.com/)

[http://www.centraljob.fr/.](http://www.centraljob.fr/)

Ժամանակավոր աշխատանք առաջարկող մասնավոր գործակալությունների ցանկ.

[http://www.prisme.eu/Web_Accueil/Index.aspx.](http://www.prisme.eu/Web_Accueil/Index.aspx)

(Հիշեցուն. վերը նշված կայքերը բացառապես ֆրանսերենով են)

<http://www.4icj.com/reviews/9098.htm>

<http://www.learn4good.com/jobs/language/english/list/country/france/>

<http://ec.europa.eu/eures/home.jsp?lang=en>

3. Ներգաղթն ուսման նպատակով

Ֆրանսիայում վեց ամսից ավելի տևողությամբ ուսանելու նպատակ ունեցող օտարերկրյա ուսանողները պետք է ստանան *étudiant* նշումով երկարաժամկետ վիզա: Ուսանողներին խորհուրդ է տրվում, նախքան ուսման ողջ տևողությամբ վիզայի ձեռքբերումը, անպայման համալսարան ընդունված լինելու երաշխիք ունենալ: Ֆրանսիական վիզաները Ֆրանսիայում չեն կարող երկարացվել: Ֆրանսիայում երեք ամսից ավելի տևողությամբ բնակության համար օտարերկրյա ուսանողները պետք է Ֆրանսիա ժամանելուց հետո երկու ամսվա ընթացքում ձեռք բերեն «ուսանողի» բնակության թույլտվություն (սա տարբերվում է վիզայից): Ուսանողական վիզաներն ինքնաբերաբար երկարացվում են՝ անկախ ուսանողի ազգությունից, եթե վերջինս ներկայացնում է փաստաթղթեր, որոնք հիմնավորում են ուսումը շարունակելու անհրաժեշտությունը: Ավելի մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել

<http://www.edufrance.fr/en/a-etudier/etudes05-1.htm> կայքը:

Վիզայի վերաբերյալ տեղեկություններ կարելի է ստանալ Ֆրանսիայի դեսպանատան կայքից.

<http://www.ambafrance-srb.org/spip.php?article1190#Studenska-viza>

Ձեր մնալու ծախսերը հոգալու մի շարք եղանակներ կան՝ կրթաթոշակներ, աշխատանք և այլն: Բնակության թույլտվություն ունենալու պարագայում Ֆրանսիայում ուսման ընթացքում աշխատելու համար ձեզանից աշխատանքի թույլտվություն չի պահանջվում:

Ֆրանսիայի կառավարությունն ամեն տարի կրթաթոշակներ է սահմանում Ֆրանսիա ժամանող ուսանողների և հետազոտողների համար: Դրանք հիմնականում նախատեսված են մագիստրատուրայի ուսանողների կամ գիտական հետազոտությունների համար: Ֆրանսիայում սահմանված կրթաթոշակների մասին ավելի հանգամանալից կարելի է տեղեկանալ http://www.edufrance.fr/PDF_INFO/TravailBourse_EN.pdf կայքից:

Ֆրանսիայում ուսանող բոլոր անձինք ուսման տևողության ընթացքում աշխատելու իրավունք ունեն, եթե նրանք հանդիսանում են կրթական հաստատության ուսանող, որը երաշխավորում է նրանց ապահովագրությունը Ֆրանսիայի պետական առողջապահական ապահովագրության համակարգի ներքո (Sécurité Sociale), իսկ ԵՄ քաղաքացիություն չունեցողներն ունեն նաև բնակության իրավունք: Ֆրանսիայի օրենսդրությունը ներկայումս օտարերկրյա ուսանողներին թույլատրում է աշխատել տարեկան առավելագույնը 964 ժամ, երաշխավորելով նվազագույն աշխատավարձը, որը կազմում է՝ առանց պահումների (նախքան սոցիալական ապահովության համար միջինում 20% պահումը), մեկ ժամի համար 8.44 Եվրո: Ուսման տևողության ընթացքում ոչ լրիվ օրով աշխատելու համար ուսանողներն այլևս կարիք չունեն ժամանակավոր աշխատանքի թույլտվություն (autorisation provisoire de travail - APT) ստանալու:

2007 թվականի Եվրոպայի լավագույն 150 համալսարանների ցանկում տասը ֆրանսիական համալսարաններն էին.

- _ Ecole Normale Supérieure, PARIS: <http://www.ens.fr/>
- _ École Polytechnique: <http://www.polytechnique.fr/>
- _ Ecole Normale Supérieure de LYON: <http://www.ens-lyon.eu/web/nav/>
- _ Université Pierre-et-Marie-Curie – PARIS : <http://www.upmc.fr/FR/info/00>
- _ Université Louis Pasteur – STRASBOURG: <http://www-ulp.u-strasbg.fr/>
- _ Sciences Po PARIS: <http://www.sciences-po.fr/portail/>
- _ Université Paris-Sud, PARIS XI: <http://www.upsud.fr/fr/index.html;jsessionid=3CB25836E8F31C532BF308744DECC70A>
- _ Université Joseph-Fourier, GRENOBLE I: <http://www.ujf-grenoble.fr/>
- _ Université Paris-Sorbonne (PARIS IV): <http://www.paris4.sorbonne.fr/fin/>
- _ University of MONTPELLIER II – Sciences: <http://www.univ-montp2.fr/>

Օտարերկրյա ուսանողների համար ծրագրերի մասին կարող եք տեղեկանալ http://www.edufrance.fr/fr/fsearch/etudes03-1_EN.htm կայքում:

4. Բնակության թույլտվություն

Ընդհանուր կանոններ՝ անկախ ներգաղթի կարգից իրավասու իշխանությունները

Կացության թույլտվությունը Պրեֆեկտի իրավասությունն է: Այնուհանդերձ, Պրեֆեկտին զուգահեռ, կացության տրամադրման և բնակության թույլտվության գործընթացին մասնակից են նաև այլ վարչական մարմիններ:

Գործընթացի քայլերը՝ ինչ պայմաններ պետք է բավարարվեն

Սկզբունքորեն 18 տարեկանից բարձր յուրաքանչյուր օտարերկրացի, ով ցանկանում է երեք ամսից ավելի տևողությամբ մնալ Ֆրանսիայում, պետք է կացության թույլտվություն ունենա: Կացության թույլտվության համար առաջին դիմումը պետք է ներկայացվի Ֆրանսիայում գտնվելու առաջին երկու ամսվա ընթացքում:

Բոլոր դեպքերում դիմորդը պետք է ներկայացնի տեղեկություն իր քաղաքացիական կարգավիճակի մասին, բնակության հիմնավորում, լուսանկարներ և իր անձնագիրը: Առաջին անգամ դիմելու պարագայում դիմորդը ենթակա է առողջական վիճակի քննության, որը կազմակերպում է Միգրացիայի և օտարերկրացիների ընդունման գործակալությունը: Կացության թույլտվություն տրամադրելիս հաշվի է առնվում նաև հասարակական կարգին սպառնալիքի բացակայությունը՝ լայն մեկնաբանությամբ:

Չափահաս նորեկները և 16-ից 18 տարեկան օտարերկրացիները, ովքեր հաճախ մուտք են գործում Ֆրանսիայի տարածք՝ երկարատև բնակության ակնկալիքով, պետք է ստորագրեն «ընդունման և ինտեգրման պայմանագիր»: Այս պայմանագրի շրջանակներում օտարերկրացին պետք է անցնի քաղաքացիական դասընթաց և, անհրաժեշտության դեպքում, նաև լեզվի դասեր: Այս պայմանագրի նպատակն է՝ սերտ կապ հաստատել բնակություն հաստատելու և ինտեգրման միջև:

Ներգաղթի մասին նոր օրենքը համալրում է «ընդունման և ինտեգրման պայմանագիրը»՝ բնակության երկրում կատարելով դիմորդի ֆրանսերենի և «Հանրապետության արժեքների» իմացության գնահատում: Անհրաժեշտության դեպքում առավելագույնը երկու ամսվա տևողությամբ դասընթաց է կազմակերպվում, ինչից հետո ևս մեկ գնահատում է կատարվում: Վիզայի տրամադրումը պայմանավորվում է նաև դասընթացին մասնակցությամբ:

Բողոքարկումը և որոշումների դատական վերահսկողությունը

Որոշման մեջ պետք է նշվեն դրա իրավական և փաստացի պատճառները: Կացության թույլտվության մերժման պարագայում կարելի է բողոքարկել՝ դիմելով վարչական դատարան: Կարելի է նաև բողոքարկել՝ դիմելով Պրեֆեկտին կամ Ներքին գործերի նախարարին՝ հիերարխիկ կարգով:

Պայմանները՝ ըստ կացության տևողության ժամանակավոր բնակություն

Ժամանակավոր կացության քարտը սովորաբար տրվում է ոչ ավելի, քան մեկ տարի ժամանակով և ամեն դեպքում չի կարող գերազանցել Ֆրանսիայում մնալուն առնչվող փաստաթղթերի կամ վիզայի վավերության ժամկետը: Ժամանակավոր կացության թույլտվությունը դասակարգվում է ըստ Ֆրանսիայում կացության տեսակի: Այսինքն՝ կան ժամանակավոր կացության մի քանի տեսակի քարտեր՝ այցելության, ուսանողական, վճարովի աշխատանքի, գիտնականի, արվեստի և մշակույթի գործիչների, մասնավոր և ընտանեկան, առևտրական, արհեստավորական, ֆերմերական և այլն:

Առաջին ժամանակավոր կացության թույլտվության շնորհման համար պետք է վճարում կատարվի Օտարերկրացիների ընդունման և միգրացիայի գործակալությանը:

Ժամանակավոր կացության տրամադրման որոշ պայմաններ ընդհանուր են տարբեր կարգերի համար. կանոնավոր մուտք Ֆրանսիայի տարածք՝ հաստատված համապատասխան ճամփորդական փաստաթղթերով, երկարաժամկետ վիզա, դիմելու պահի դրությամբ կանոնավոր բնակություն և հասարակական կարգին սպառնալիքի բացակայություն:

Մշտական բնակություն

Երկարաժամկետ բնակության թույլտվությունը տրվում է տասը տարվա տևողությամբ՝ ինքնաբերաբար երկարացման իրավունքով: Այն լիարժեք մուտք է ընձեռում աշխատանքային շուկա: Այստեսակ թույլտվության տրամադրման պայմանները վերջին տարիներին լրջորեն խստացվել են:

Երկարաժամկետ բնակության թույլտվության տրամադրման սովորական գործընթացն ի կատար է ածում 2003թ. նոյեմբերի 25-ի Եվրոպայի խորհրդի հրահանգը՝ 2003/109 ԵԽ, որը վերաբերում է երկարաժամկետ բնակությամբ՝ երրորդ երկրների հպատակների կարգավիճակին: Թույլտվության վրա նշված է՝ «երկարաժամկետ բնակություն - ԵԽ»: Դիմորդը պետք է հաստատի իր դիմումին նախորդող հինգ տարիների ընթացքում իր կանոնավոր ներկայությունը Ֆրանսիայում (այս պայմանը չի վերաբերում ուսանողի կամ սեզոնային աշխատողի կարգավիճակ ունեցող օտարահպատակներին): Բացի այդ, օտարահպատակը պետք է հաստատի կայուն և բավարար ֆինանսական միջոցների, ինչպես նաև բժշկական ապահովագրության առկայությունը: Երկարաժամկետ բնակության տրամադրման վերջերս ավելացած մեկ այլ կարևոր պայման է դիմորդի՝ ֆրանսիական հասարակությանն ինտեգրումը: Սա նաև նավորապես գնահատվում է Ֆրանսիայի Հանրապետության հիմնական արժեքների հանդեպ նրա տածած հարգանքով և ֆրանսերենի բավարար իմացությամբ: Ինտեգրման գնահատումը հաշվի է առնում նաև «ընդունման և ինտեգրման պայմանագիրը» ստորագրելու փաստը և դրա հանդեպ ցուցաբերած հարգանքը: Ֆրանսիայում ընտանեկան կապեր ունեցող որոշ օտարահպատակների համար գործում է փոքր-ինչ մեղմ իրավական կարգ: Այս դեպքում դիմորդը հարկ չունի հիմնավորելու Ֆրանսիայում տևականորեն մնալու ցանկությունը կամ ներկայացնելու ֆինանսական միջոցները հաստատող փաստաթղթեր:

Թեև երկարաժամկետ բնակության իրավունքի տրամադրումը խստորեն սահմանափակվել է, այնուհանդերձ կան օտարահպատակների մի շարք կարգեր, որոնց հանդեպ այն շարունակում է կիրառելի մնալ, հիմնականում՝ ֆրանսահպատակի օտարահպատակ զավակները, ում 21 տարին դեռ չի լրացել կամ ովքեր ծնողների խնամակալության տակ են, կամ ֆրանսահպատակի կամ նրա ամուսնու/կնոջ խնամակալության

տակ գտնվող ավագները: Նման իրավիճակում թույլտվության տրամադրումը կախված է հասարակական կարգին սպառնալիքի բացակայությունից և Ֆրանսիայում կանոնավոր բնակությունից:

Երկարաժամկետ բնակության թույլտվության երկարացումը համարվում է իրավունք: Այս սկզբունքի հիմնական հետևանքներից մեկն այն է, որ երկարացման մերժումն անհնարին է, նույնիսկ հասարակական կարգի սպառնալիքի առկայության դեպքում: Նման իրավիճակում միակ իրավական գործընթացը երկրից վտարելն է:

Ներգաղթի մասին նոր օրենքը նախատեսում է՝ երկարաժամկետ բնակության թույլտվության ժամկետի սպառնան դեպքում մշտական բնակության թույլտվության տրամադրում:

Քանի որ երկարաժամկետ բնակության թույլտվության երկարացումն իրավունք է, վերը նշված պայմանն այնքան էլ չի կարևորվում: Ըստ կառավարության, այս նոր թույլտվությունը նպատակ ունի «հեշտացնելու այն օտարահպատակների կյանքը, ովքեր երկարատև բնակություն ունեն Ֆրանսիայում, հարգում են (Ֆրանսիական) արժեքները, հետևաբար օրինակելի կերպով ինտեգրվել են հասարակությանը»:

5. Ապաստան տրամադրելու գործընթացը

ANAEM-ը պարտավոր է Ֆրանսիայում մշտական բնակության թույլտվությամբ յուրաքանչյուր օտարահպատակի առաջարկել Կառավարության հետ ինտեգրման և համակեցության պայմանագրի ստորագրում: Համաձայն 2006թ. հուլիսի 24-ի՝ Ներգաղթի և ինտեգրման ակտի, յուրաքանչյուր 16-ից 18 տարեկան օտարահպատակ, ով առաջին անգամ Ֆրանսիայում մնալու թույլտվություն է ստացել և ցանկություն ունի այնտեղ բնակվելու, պետք է պատրաստ լինի ֆրանսիական հասարակությանն ինտեգրվելուն: Այն հստակեցնում է պայմանները, ըստ որոնց ինտեգրման և համակեցության պայմանագիր ստորագրած անձը շահում է՝ օգտվելով միջոցներից, որոնք նպաստում են նրա ինտեգրմանը և դրան ուղղված պարտավորությունների կատարմանը: Պայմանագիրը կազմել և ներկայացրել է ANAEM-ը: Այն ստորագրվում է Պրեֆեկտի

կողմից, ով տվյալ տարածքում լիազորված է բնակության թույլտվություն տրամադրելու:

Ֆրանսիայում ապաստանի դիմել ցանկացող միգրանտները պետք է տեղյակ լինեն, որ ինտեգրման և համակեցության պայմանագրի ստորագրումը պարտադիր է: Պարտադիր է նաև քաղաքացիական դասընթացը: Վերաբնակը պետք է մասնակցի Ֆրանսիայում կյանքի վերաբերյալ տեղեկատվական դասընթացի, որն ադապտացվում է ըստ պահանջի: Եթե վերաբնակի՝ ֆրանսերենի (բանավոր և գրավոր) իմացությունն անբավարար է, նա պետք է մասնակցի նաև լեզվի ուսուցման դասընթացի (առավելագույնը 400 ժամ տևողությամբ): Դասընթացի արդյունքը վավերացվում է ֆրանսերենի տարրական իմացության դիպլոմով (DILF): Եթե վերաբնակի ֆրանսերենի իմացությունը գնահատվում է բավարար՝ ANAEM -ը նրան տալիս է լեզվի ուսուցման դասընթացից ազատող փաստաթուղթ (AMDFL):

6. Ընտանիքի վերամիավորում

Ներգաղթի և ինտեգրման մասին նոր օրենքը (2006) նպատակ ունի ապահովելու, որ ներգաղթողները հարգեն ֆրանսիական արժեքները, խթանելու նրանց ինտեգրումը ֆրանսիական հասարակությանը, պայքարելու բռնի կամ պոլիգամ ամուսնությունների դեմ և սահմանելու ընտանիքների վերամիավորման պայմանները: Ֆրանսահպատակ անձի ընտանիքի օտարահպատակ անդամները (ամուսին/կին, 18 տարեկանը չբոլորած կամ խնամակալության տակ գտնվող զավակներ, ֆրանսահպատակ երեխայի ծնողներ կամ խնամակալության տակ գտնվող ավագներ) կարող են, որոշ հանգամանքներում, վերաբնակվել Ֆրանսիայում և մշտական բնակության թույլտվություն ստանալ: Ֆրանսիայում նվազագույնը 18 ամիս ապրած և առնվազն մեկ տարվա վավերությամբ բնակության թույլտվություն ունեցող անձինք կարող են ընտանիքի վերամիավորման պատրվակով դիմել, որպեսզի իրենց ամուսինը/կինը կամ 18 տարին չբոլորած երեխաները Ֆրանսիա ներգաղթելու թույլտվություն ստանան: ANAEM-ը ընտանիքի վերամիավորման համար դիմորդներին աջակցություն է տրամադրում գործընթացի ողջ տևողության ընթացքում: Բնակության պայմանների և,

անհրաժեշտության դեպքում՝ եկամտի աղբյուրի ստուգումներից և Պրեֆեկտի կողմից դրական պատասխան ստանալուց անմիջապես հետո ANAEM-ը ընթացք է տալիս ընդունելության գործընթացին և հանդիպումներ է կազմակերպում, նպատակ ունենալով հնարավորինս լավ պայմաններ նախապատրաստել ընտանիքի ժամանման համար: Երբ ընտանիքը ժամանում է Ֆրանսիա, ANAEM-ը պարտադիր կանխարգելիչ և խորհրդատվական **բուժքննություն** է կազմակերպում, ինչպես նաև առաջարկում է ստորագրել **Ընդունելության և ինտեգրման պայմանագիր**, որով հեշտացվում է նրանց մուտքը պետության տարածք:

2006թ. ի վեր դիմորդների՝ Ֆրանսիայում բնակության ժամկետը երկարացվել է, 12-ից դառնալով 18 ամիս: Շահառու ամուսնու/կնոջ նվազագույն օրինական տարիքը 18 տարեկանն է: Դիմորդի և նրա ամուսնու/կնոջ ողջ եկամուտը հաշվառվում է, անկախ ընտանիքին հատկացվող նպաստներից: Բնակարանային պայմանները. ընտանիքի վերամիավորումը կարող է մերժվել, եթե ընտանիքի՝ Ֆրանսիա ժամանելու պահին դիմորդը չունի բնակարանային պայմաններ, որոնք գնահատվում են որպես բավարար՝ ընտանիքի նույն վայրում բնակվելու համար: Բաժանման դեպքում ամուսնու/կնոջը շնորհված բնակության թույլտվությունը կարող է չեղյալ համարվել, կամ դրա ժամկետի երկարացումը կարող է մերժվել՝ Ֆրանսիայում բնակվելու թույլտվություն ստանալուց երեք տարի հետո: Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները կարելի է գտնել Ֆրանսիայի դեսպանատան կայքում. <http://www.ambafrance-srb.org/spip.php?article1190>.

7. Առողջապահության համակարգը

Եթե դուք Ֆրանսիայի բնակիչ եք, դուք պետք է դրամական վճարում կատարեք ձեր առողջության ապահովագրության համար: Եթե դուք **աշխատող** եք, ապա առողջապահական վճարումները, հաճախ նաև *mutuelle*-ը (փոխադարձ ապահովագրության գանձումը), ավտոմատ կպահվի ձեր աշխատավարձից: Ձեր գործատուն պարտավոր է ձեզ ապահովել սոցիալական ապահովության համարով, ինչը ձեզ առողջապահական ծախսերի հատուցման հնարավորություն կտա՝ պարտադիր վճարում-հատուցում համակարգի (*régime obligatoire*)

շրջանակներում: Նմանապես, ձեզ կտրվի *carte vitale* քարտ: Եթե դուք ինքնազբաղված աշխատող եք, ձեր մասնագիտական գործունեության բնագավառից է կախված, թե ուր պետք է գրանցվեք՝ առողջապահական և սոցիալական այլ վճարումներ կատարելու համար: Տարբերակները հետևյալն են. URSSAFF (Union de recouvrement des cotisations de sécurité sociale et d'allocations familiales - www.urssaf.fr), տվյալ վայրի առևտրի պալատը, (*chambre de commerce*), արհեստակցական պալատը (*chambre de métiers*), *Maison des artistes-Á* (www.lamaisondesartistes.fr) և AGESSA-ն (*Association pour la gestion de la sécurité sociale des auteurs* - www.agesa.org.)

8. Սոցիալական ապահովության համակարգը

Որպես Ֆրանսիայում մշտական բնակություն ունեցող, դուք կօգտվեք երկրի սոցիալական ապահովության արտոնություններից: Որպես Ֆրանսիայի աշխատող, դուք վճարումներ պիտի անեք երկրի սոցիալական ապահովության համակարգին: Ֆրանսիայի սոց. ապահովության համակարգը խիստ բազմամասն է և բաղկացած է ավելի քան քսան կազմակերպություններից, որոնցից յուրաքանչյուրը զբաղվում է տարբեր սոցիալական ծրագրերի համար գանձումներ և վճարումներ կատարելով: Որպես աշխատող, ձեր սոցիալական ապահովության վճարումները կգանձվեն աշխատավայրում և կնշվեն աշխատավարձի ցուցակում (*bulletin de paie*). URSSAF-ը ձեր վճարումների համար հիմնական պատասխանատու կազմակերպությունն է, թեև ոչ միակը: Ձեր սոցիալական ապահովության վճարումներն օժանդակում են սոցիալական ծրագրերին, ինչպիսիք են գործազրկության նպաստները, առաջնային առողջապահական խնամքը, պետական թոշակները և ընտանեկան նպաստները, որոնցից կարող եք օգտվել նաև դուք՝ որպես Ֆրանսիայի մշտական բնակիչ:

Ձեր գործատերը ձեզ մանրամասն կբացատրի այս ստանդարտ վճարումների կարգը, հնարավոր է՝ նաև առաջարկելով առողջապահական ծախսերի հատուցման ընդլայնված ընդգրկում (*mutuelle*), որը կգանձվի աշխատավարձից: Մարդկանց առանձին կատեգորիաների, օրինակ՝ ինքնազբաղված կամ թոշակառու անձանց համար կիրառվում է գանձումների այլ կարգ: Կարևոր է դիմել պատկան ատյանների՝ վճարումների կամ արտոնությունների առնչությամբ ձեր

կարգավիճակը գնահատելու համար: Եթե ձեզ հասնում է սոցիալական ապահովագրություն, ապա դուք կստանաք գրանցման համար և քարտ՝ **carte vitale**: Այս քարտը տրվում է ապահովագրված աշխատողին, և այնտեղ նշվում են նաև ընտանիքի անդամները, որոնք նույնպես ապահովագրվում են դրանով: Ֆրանսիան ունի պարտադիր սոցիալական ապահովագրության համակարգ, որն ընդգրկում է ծերության թոշակը, գործազրկությունը և ազգային առողջապահությունը: Եթե դուք Ֆրանսիա եք ժամանում որպես ներգաղթող և աշխատում ու վարձատրվում եք ֆրանսիական ընկերության կողմից, ողջ թղթավարությունը կհոգա ձեր ընկերությունը, և դուք կկարողանաք վճարումներ կատարել և օգտվել սոցիալական ապահովագրությունից նույն կարգով, ինչպես Ֆրանսիայի քաղաքացիները: Եթե դուք Ֆրանսիա եք ժամանում ժամանակավոր գործունեությամբ, ձեր սոցիալական ապահովագրության խնդիրները կարող են լուծվել ձեր երկրի և Ֆրանսիայի միջև փոխադարձ համաձայնագրով: (Օրինակ՝ ԵՄ երկրների և ԱՄՆ-ի միջև), որի պարագայում թղթավարությունը կհոգա ձեր ընկերությունը, թեև կարող է հարկ լինել, որպեսզի դուք գրանցվեք համապատասխան սոցիալական ապահովագրության գրասենյակում: Խորհուրդ կտայինք ձեր երկրում Ֆրանսիայի դեսպանատանը ճշտել սոցիալական ապահովագրության վերաբերյալ Ֆրանսիայի հետ համաձայնագրերի մասին:

9. Բնակարանային պայմանները

Կենտրոնական կառավարության գործունեությունը նպատակ ունի խրախուսելու բնակարանային բազմատեսակ պայմանների տրամադրումը, առանձնատներից մինչև բնակարաններ, գյուղական թե քաղաքային վայրերում, պետական, թե մասնավոր հատվածում: Ամեն ընտանիք պետք է ի վիճակի լինի իր կարիքներին համապատասխան մատչելի բնակարան գտնել: Ընդհանուր առմամբ տարեկան ավելի քան 300.000 կառուցվող բնակարանների ավելի քան երեք քառորդը պետության կողմից լրահատկացումներ են ստանում: Սոցիալական ծրագրով բնակարան ստանալու դիմորդների համար սահմանված է եկամտի վերին սահման (որով որոշվում է այս ծրագրին դիմելու՝ տվյալ անձի համապատասխանությունը), ինչպես նաև բնակարանային վարձի վերին սահման, որով սահմանափակվում է սոցիալական

բնակարանների բնակվարձը: Այս սահմանափակումները հաստատվում են ողջ երկրի համար, տնտեսությունների և ընտանիքների տարբերակումով, իսկ այնուհետև համապատասխանեցվում են ըստ աշխարհագրական տեղանքի: Եկամտի ներկայիս հաստատված սահմանը բնակչության երկու երրորդին հնարավորություն է ընձեռում դիմելու բնակատեղանքի սոցիալական ծրագրին: Սոցիալական բնակատեղանքի գործակալությունը շահում է «շինարարական լրահատկացումներից» (aide à la pierre), իսկ ցածր եկամուտ ունեցող վարձակալողները կարող են հատուկ նպաստ ստանալ (APL - aide personnalisée au logement): Նպաստը կարող է կազմել բնակվարձի ողջ գումարը կամ դրա մի մասը՝ կախված վարձակալողի եկամտի չափից և տնտեսության կամ ընտանիքի կարգից: Ֆրանսիայում բնակարանային պայմանների և բնակվարձի մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ հետևյալ կայքից.
<http://www.justlanded.com/english/France/Topics/Housing-Rentals>.

10. Դիպլոմների ճանաչումը

Քանի որ Ֆրանսիայից դուրս շնորհված և ֆրանսիական դիպլոմների միջև գոյություն չունի իրավական հավասարազորություն, ENICNARIC-ը տեղեկատվություն է տրամադրում արտերկրյա դիպլոմների՝ Ֆրանսիայում ճանաչվելու վերաբերյալ և վկայականներ է տրամադրում, ուր նշված է ուսուցման այն մակարդակը, որը թույլ է տալիս ճանաչելու դիպլոմ շնորհած երկրի տվյալ մակարդակի դիպլոմը:

Օտարերկրյա որակավորումների ճանաչման գործընթացների, ինչպես նաև օտարերկրյա որակավորում ունեցողների մասնագիտական աշխատանքային հնարավորությունների վերաբերյալ հավելյալ տեղեկություններ կարելի է ստանալ հետևյալ կայքերից.

<http://www.education.gouv.fr/pid266/veniretudier-en-france.html>, and <http://www.ciep.fr/enic-naricfr/>.

11. Աջակցման ծառայություններ

ANAEM - Agence Nationale de l'Accueil des Etrangers et des Migrations - <http://www.anaem.social.fr/>.

Direction de la population et des migrations (DPM) - <http://www.travail-solidarite.gouv.fr,>

OFPROA - Office Français de Protection des Réfugiés et Apatrides - <http://www.ofpra.gouv.fr/>.

Commission des Recours des Réfugiés (CRR) - <http://www.commission-refugies.fr/>.

Tribunaux administratifs - <http://www.conseil-etat.fr/>.

Conseil d'Etat - <http://www.conseil-etat.fr>.

ADDE - Avocats pour la Défense du Droit des Etrangers

ANAFE, Association Nationale d'Assistance aux Frontières pour les étrangers - <http://www.anafe.org/>.

Association professionnelle des Rapporteurs près la Commission des Recours des Réfugiés (APRA-CRR) - <http://www.apra-crr.asso.fr>.

CICADE (Centre pour l'Initiative Citoyenne et l'Accès au(x) Droit(s) des Exclus)

<http://cicade.asso.free.fr/>.

CIMADE (Comité intermouvement auprès des évacués) - <http://www.cimade.org>.

COMEDE (Comité médical pour les exilés) - www.comede.org/.

Coordination Française pour le droit d'asile - <http://cfda.rezo.net/>.

FASTI (Fédération des associations de soutien aux travailleurs immigrés) - www.fasti.org.

Forum réfugiés - <http://www.forumrefugies.org>.

France Terre d'asile - FTDA - <http://www.france-terre-asile.org/>.

GISTI (Groupe d'Information et de Soutien des Immigrés) - <http://www.gisti.org/>.

Actualité des mouvements de sans papiers - <http://pajol.eu.org/>.

Թրաֆիքինգի (մարդկանց շահագործման) զոհեր.

Comité contre esclavage moderne

31, rue des Lilas 75019 Paris

Tél : 01.44.52.88.90 - Fax : 01.44.52.89.09

infoccem@wanadoo.fr

Association ALC - <http://www.association-alc.net/default.asp>

Secours Catholique - <http://www.secours-catholique.asso.fr/>

12. Քաղաքացիություն/հպատակություն

Ֆրանսիայում (ներառյալ անդրծովյան տարածքները) ծնված երեխաները, որոնց ծնողներից առնվազն մեկը Ֆրանսիայի քաղաքացի է, ինքնաբերաբար ծննդյան պահից ստանում են Ֆրանսիայի քաղաքացիություն: Օտարերկրյա ծնողներից Ֆրանսիայում ծնված երեխան կարող է Ֆրանսիայի քաղաքացիություն ստանալ. ծննդյան պահից, եթե չունի այլ հպատակություն, 18 տարեկանում, եթե Ֆրանսիայի մշտական բնակիչ է և 11 տարեկանից առնվազն 5 տարի բնակվել է Ֆրանսիայում, 16 տարեկանից՝ իր իսկ դիմումի համաձայն, եթե Ֆրանսիայի մշտական բնակիչ է, 13 տարեկանից, համաձայն ծնողների դիմումի, եթե Ֆրանսիայի մշտական բնակիչ է, եթե ծնվել է Ֆրանսիայում և ուն ծնողները ծնված են նախկինում ֆրանսիական տիրապետության տակ գտնվող տարածքում՝ նախքան անկախացումը, ծննդյան պահից, եթե ծնվել է Ֆրանսիայում՝ նախքան 1994թ. հունվարի 1-ը և 18 տարեկանից, եթե ծնվել է Ֆրանսիայում՝ 1994թ. հունվարի մեկին կամ դրանից հետո:

Անձը կարող է դիմել ֆրանսիական քաղաքացիություն ստանալու համար՝ Ֆրանսիայում 5 տարի մշտական բնակությունից հետո: Մշտական բնակության տևողությունը նվազեցվում է երկու տարու, եթե դիմողը Ֆրանսիայի համալսարանի կամ grande ecole-ի շրջանավարտ է:

Քաղաքացիության տրամադրումն ըստ մշտական բնակության համաձայնեցված է Աշխատանքի, սոցիալական սերտացման և բնակապահովման նախարարության որոշմամբ Journal Officiel-ում հրապարակված որոշմանը: Ֆրանսիայում բնակվող և երկու տարի Ֆրանսիայի քաղաքացու հետ ամուսնական կապի մեջ գտնվող օտարերկրացին կարող է հայտարարությամբ ստանալ Ֆրանսիայի քաղաքացիություն, եթե նրանք մեկ տարի անընդմեջ բնակվել են Ֆրանսիայում: Ի լրումն դիմորդի քաղաքացիությունը և նրա ամուսնու/կնոջ քաղաքացիությունը հավաստող բազմաթիվ փաստաթղթերի, պահանջվում է նաև ֆրանսերենի տիրապետում: Ամուսնական զույգն իր քաղաքացիության վերաբերյալ հայտարարությամբ դիմում է տեղի դատարան կամ, անդրծովյան տարածքներում՝ Ֆրանսիայի հյուպատոսարան: Հայտարարություն

ընդունվում կամ մերժվում է Արդարադատության նախարարության որոշմամբ: 1973թ. ի վեր թույլատրված է երկքաղաքացիությունը:

13. Այլ կարևոր տեղեկություններ

Ներքին գործերի, անդրծովյան ֆրանսիական տարածքների և տեղական իշխանությունների նախարար

Place Beauvau
75800 Paris
01 49 27 49 27

Պետնախարար, կցված արտաքին գործոց և Եվրոպայի հարցերով նախարարին, Արտաքին գործերի և Մարդու իրավունքների պատասխանատու

37, Quai d'Orsay
75007 Paris
01 43 17 53 53

Ներգաղթի, ինտեգրման, ազգային ինքնության և աջակից զարգացման հարցերով նախարար

101, rue de Grenelle
75007 Paris
01 55 55 10 10
<http://www.premier-ministre.gouv.fr/iminidco>.

**Ֆրանսիայի Հանրապետություն
Հայաստանի Հանրապետության դեսպանատուն**

9 Rue Viète, 75017 Paris, France
Tel: (33 14) 2129800
Fax: (33 14) 2129803
e-mail: ambarmen@wanadoo.fr

**Ֆրանսիայի Հանրապետություն
(REPUBLIQUE FRANCAISE)**

Ֆրանսիայի Հանրապետության դեսպանատուն
8, Grigor Lousavoritch Street
Tel: 561103, 5646 67, 583511, 542929
Fax: 569831

E-Mail: admin@ambafran.am
Internet: www.ambafrance-am.org

IOM Paris Special Liaison Mission (Հատուկ կապի առաքելություն)

9, cité de Trévisse
F- 75009 Paris / France
Tel: +33.0 140 44 06 91
Fax: +33.0 140 44 04 85

Ֆրանսիական կարմիր խաչի ընկերություն

Croix-Rouge française
98 rue Didot, 75694 Paris Cedex 14
Tel: 01 44 43 11 00
Fax: 01 44 43 11 01

